

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոչտային համար 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անող-
ջովին կամ մասամբ:
Պատուական տոյր 20 սանթիմ. երե-
փեկ անդի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

Ձատկական տօներուն պատճառով
Իրաւունք չպիտի հրատարակուի յա-
ռաջիկայ չորեքշաբթի:

ԶԱՏԻՎ

Ովսաննա՛ քու անունդ
օրհնուած ըլլայ քու գա-
լուստդ քաղաքապետութեան
անունով:

Ձեռք գիտեր ինչու մեր եկեղե-
ցին ա՛յնչափ կը ճմլէ սիրտս: Մե-
զեղիներէն, ստուերներէն ու խուն-
կէն անմեկնելի անյուսուածքն մը
կողողէ հոգիս. կեանքին մէջ ա՛յլ
ոչինչ կը տեսնամ պայծառ. հետ-
զհետէ անհուն, անգոյն պատրանք
մը կըլլայ ան ինծի համար, դամ-
բանական ծաղիկի մը պէս դըժ-
բազդ ու անոր պէս ալ վաղա-
թարշամ:

Հոտ՝ ո՛րքան սիրելի է ինծի
սիրտս պարպել. տա՛ ջղուտ պատ-
կերին դէմը, որ յաւիտեական
գաղարուն է ցիսուսին, յաւիտե-
ական կծկումը Գաղափարին խա-
ւարի խաչափայտին վրայ, ո՛ր-
քան սիրելի է ինծի լա՛յ յուսա-
հատ լաց մը:

Օ՛հ, երբեք կեանքը չի պիտի
անուշնայ, տարիները կանցնին ու
հոտ է գարննալ մութ պատկերը,
խաւարտչին վայր՝ ուր կը ցցուի
սեւ խաչափայտը: Ու երբեք ցաւի
կծկումները չի պիտի անհետանան
ցիսուսի դէմքէն: Լա՛ց, լա՛ց, —
լա՛ց անսպառ լացով մը, հոգիս,
կեանքը ցաւագին ջղաճգութիւն
մըն է:

Կեանքը... կեանքը հոտ չըզ-
գացուիր, դո՛ւրս եկեղեցիէն. դէպ
ի արձակ վայրերը, դէպի լե՛ռ:
Ահաւասիկ գարունը իր կանանչա-
ղարդ անսահման շուրջափն մէջ,
Դէպի ետ դնա՛ միտքով, դէպի
չա՛տ ետ, նորէն գարունն է ահա-
ւասիկ. տե՛ս գաղափարին մարդը,
խոնարհ, աւանակի մը վրայ, իր
հոգիին ալքերուն մէջ մտածող,
որ ուխտի քաղաքը կը մտնայ:
Դալար ոստերուն մէջէն կը լսես
անհուն ողջագուրումը. «ովսան-
նա՛ բարձունքներուն...»: Ատի-
կա Մարդն է, որ կեղծիքը պա-

տըռտեց ու խաւարին լոյս բերաւ,
աւարկա հսկան է, որ ճամբան
հարթեց ուրիշ կեանքը իր պատ-
մական ուղին պիտի շարունակէ:
Բռնութիւնը խաչեց զինքը, սա-
կայն ա՛ն բեղմնաւոր սերմը ձգած
էր որ չը կորսուիր: Խաչին տա-
կէն նոր կեանք մը կարծնայ, գե-
րեզմանէն Գաղափարը կը յառնէ
արծաթափայլ եւ շողշողուն: Ա՛տ
է Թաղութիւնը, ա՛տ է Ձատիկը,
Հեռան վրայ կեանքը անյոյս թո՛ղ
չերեւայ մեղի, ողջագուրնք Գա-
ղափարը որ մեզի կուգայ. «Ով-
սաննա՛ անունդ, օրհնուած ըլ-
լայ քու գաղափարդ քաղաքակը-
թութեան անունով»:

Ձէ, կեանքը ցաւագին ջղաճգու-
թիւն մը չէ, անիկայ իր միւս ե-
րեսն ալ ունի. ամէն անգամ որ
հսկայի մը մարտիրոսութենէն նոր
կեանք մը կը ցաթէ, յոյսի երգ
մըն ալ կուգայ թրթռալ մեր շըր-
թութենէն: Այդ յոյսի երգը,
երջանկութիւնն է ահաւասիկ, յա-
ջող թուիչի մը յանգերգը, մեր
գէպի իտեալ մշտնջենական թուի-
չին մէջ:

Եւ ամէն տարի, որ գարունին
հովերուն վրայ Ձատիկը կու-
գայ, մեր կեանքին առօրեայ ցա-
ւերը բարեւաւոր գաղափարին
մուտքը զգանք մեր մէջ. օ՛հ,
մենք շատ տառապած ենք եւ սի-
րոյ «ովսաննա՛ն», որ մեր կուրծ-
քէն պիտի թռչի կեղծ չկրնար
ըլլալ. «ովսաննա՛, ովսաննա՛ ա-
նունդ, օրհնուած ըլլայ քու գա-
ղափարդ քաղաքակրթութեան ա-
նունով»:

Խ. Թ.

ԵՐՈՊԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Ամենուն ծանօթ իրողութիւնն
էր ուղղութեան եւ սկզբունքի այն
հիմնական փոփոխութիւնները զորս
Եւրոպայի քաղաքականութիւնը
կրից գերման կայսրութեան հաս-
տատութենէն ի վեր:

Պիզմարքի հսկայ ծրագիրնե-
րուն յաջողութիւնը այնպիսի հե-
տեւանքներ ունեցաւ, որոնք ոչ
մէկուն մտքէն իսկ կանցնելին ա-
կէ երեսուն տարի առաջ. եւ ու-
մէնէն աւելի Ռուսիա է որ կը

զգայ այժմ թէ ինչ մեծ սխալ
գործեր է ժամանակին՝ ձգելով որ
գերմանական զէնքերու հարուած-
ներուն տակ ճգմուի Ֆրանսա, որ-
պէս զի ուս թաղաքականութիւնը
եւ բոլոր Եւրոպա աղաթի նաբօ-
ւէտնի տիրապետող ազդեցութենէն:

Եթէ այն վճռական վայրկեանին
երբ թիւեռ Բէթէրպուրկ գնաց
աղաչելու որ Ռուսիա կասեցնէ
գերման բանակին առաջխաղացու-
թիւնը մինչեւ Ֆրանսայի սիրտը,
մինչեւ Բարիդ, Չարը Ֆրանսայի
պաղատանքներուն զիջանելով, «կե-
ցիր» մը գոռացած ըլլար Բրու-
սիոյ վիլհելմ թագաւորին, այսօր
Եւրոպայի քամակին վրայ Ալլաա
Լօրէնի խնդիրը չպիտի ճնշէր իր
բոլոր ծանրութեամբ, Ռուսիա չի
պիտի ստիպուէր իր պատմական
դերին դրժել՝ օսմանեան գահին
թեւալու եւ Հայաստանի շարդե-
րուն անշարժ դիտող մը հանդի-
սանալով, եւ պէտք չի պիտի ունե-
նար Չինաստան վազելու, լքելով,
գէթ առ այժմ, Արեւելեան խըն-
դիրը, որուն լուծումին հետա-
պնդել իր շահն էր, իր կոչումն
էր, իր գլխաւոր խնձն էր Մեծ
Պետրոսի կտակէն ի վեր: Նաեւ
այն ատեն Եւրոպա աղաթած պի-
տի ըլլար այն բարոյական սնան-
կութենէն, որուն մէջ իր դիւա-
նագիտութիւնը երթալով խրեցաւ
Սասունի արիւնհեղութենէն մին-
չեւ այսօր. քաղաքակրթութիւնը
չի պիտի անպատուէր, եւ Սուլ-
թանը չպիտի կրնար խաղալ այն
մեծ դերը, զոր այսօր ստանձնե-
ր է Եւրոպայի հանգէպ:

Եւրոպա ինկաւ, Սուլթանը
բարձրացաւ: Գերմանական կայս-
րութեան մեծագոյն գործն է այս:

Եւրոպայի ցամաքային տէրու-
թեանց ամէնէն զօրաւորը, եւրո-
պական ազգերու ամէնէն յառա-
ջագէտը գիտութեանց մէջ, Ժո-
զովուրդներու ամէնէն զարգա-
ցածը եւ խոհունը Եւրոպի դաշ-
նակիցն է այսօր. ալ տարակոյս
չի կայ ասոր: Իրողութիւնը հայ-
կական շարդերուն ժամանակ սկը-
սու յայտնուիլ, բայց հաւանա-
կանաբար ատկէ շատ առաջ գո-
յութիւն ունէր:

Արտաքին երեւոյթներէ դատե.

լով, շատեր յայտարարեցին թէ
Ռուսիոյ գաղտնի թելադրու-
թեան, կամ, անտարբերութեան
արդիւն էին Հայկական շարդերը
զորս Չարը մէկ խօսքով կրնար
արգելել:

Սակայն քաղաքական դէպքե-
րու ուղադրութեամբ հետեւողնե-
րը հիմա պէտք է աւելի հաւա-
նական գտնեն թէ Սուլթանի հը-
զօր բարեկամ ու խորհրդական
վիլհելմ Բ. ի բաժին ինկած ըլլա-
լու է մեծագոյն ազդեցութիւնը
հայկական խնդրին մէջ, ինչպէս
կրետայունականին մէջ:

Սուլթանը իր արտասովոր ճը-
կութեամբ, տոկուն նկարագի-
րով եւ ալլ եւս անվիճելի հեռա-
տեսութեամբ գիտցաւ, զանէ մին-
չեւ՝ հիմա, սքանչելապէս օգտուիլ
Գերմանիոյ բարեկամութենէն՝ դըժ-
ուարին կացութիւններէ թուրքի-
ան աղաթելու, իր ծրագիրները
գործադրելու եւ ձեռք անցնելու
դերք մը, որ մեծ կշիռ ունի իւ-
րաքանչիւր տէրութեան հանդէպ:
Իրեն համար կենսական խնդիրն
ալ այս էր, քանի որ արդէն կան-
խաւ, շատոնց համոզուած էր որ եր-
բէք իր դէմ չը պիտի տեսնէ մի-
ացեալ Եւրոպա մը, որուն առջեւ
հարկադրուէր գլուխ ծռել:

Ալ ո՛վ չպիտի ուզէ հաւատալ
որ նախ գերմանական եւ ետքը
աւստրիական մարտանաւերուն կը-
րետէէ առնել քաղաք վիլհելմ եւ
Համիտ երկրորդներուն գաղտնի
խորհրդակցութեան եւ թերեւս
վերջինին թելադրութեան ար-
դիւնքն է: Շատ հաւանական չէ՝
որ Գերմանիա Սուլթանի գիտակ-
ցութեամբ՝ անակնկալ հարուածով
մը չինական խնդրին անանկ նոր
կերպարանք մը տուաւ որ մեծ
տէրութիւնները եւ մասնաւորա-
պէս Ռուսիա ստիպուին իրենց ու-
ղադրութիւնը բոլորովին դարձնել
դէպ Ծայրագոյն Արեւելք եւ ե-
րեսի վրայ ձգել Արեւելեան խըն-
դիրը: Այս մասին շատ հրահան-
գիչ է Տ. Մինաս Չիրաքի տեսակ-
ցութիւնը մեծ տէրութեանց մէ-
կուն ղեկավարին հետ, որ ինչպէս
մեր նախընթաց թիւին մէջ հա-
ղորդեցինք մեր ընթերցողներուն:

